

ամբողջ անանկ կը ձգեն, ետքը պատը կը փլցընեն, ու սնտուկներուն մէջէն յախճապակէ ամանները դուրս կը հանեն :

Ամանները ասանկով կը շինուին կը լմրնան : Իսկ անոնց վրայի ներկը, ոսկին, փլաթինը և ուրիշ զարդերը այսպէս կը շինեն : Աերկերը իրեք տեսակ կը բաժնուին՝ տաքութե աստիճանին նայելով . այսինքն սաստիկ կրակի գոյներ, միջակ կրակի գոյներ ու թոյլ գոյներ . աս ետքի տկար գոյները որ աւելի շատ կը գործածուին՝ մեղմ կրակով կ'եփուին, այսինքն արծաթը հալեցընելու տաքութեան աստիճանէն վար : Ապոյտները քոպալթով կը շինեն, կանաչները՝ քրոմի ոքսիտով, կարմիրները՝ երկրթի ոքսիտով, դեղինները անթիմոնի ոքսիտով, իսկ մուգ կարմիրը՝ ծիրանեգոյնն ու մանուշակագոյնը՝ ան ոսկիով որ բնալոյծները կ'ստեղծեն ծիրանի՝ կ'ըսեն :

Իսկ երբոր կ'ուզեն ամանները ոսկեզօծել, կամ ձեռքով կ'ընեն գործողութիւնը և կամ տպելով . եփելու ատեննին ոսկին իր փայլունութիւնը կը կորսնցընէ, անոր համար ակատով կամ մատիտով վրան կ'ողորկեն, որ նորէն առջի փայլունութիւնը կ'առնէ : Յախճապակին վրայ գոյն ու ոսկի զարդ տալէն ետև՝ նորէն փուռը կը դնեն . այսինքն երբոր բոլորովին կը չորնայ վրայի քաշուածքը, սովորական կերպով հողէ սնտուկներու մէջ կը դնեն ու փուռը կը ձգեն, բերանը պատով կը գոցեն ու մէջը կրակ կը վառեն, որ բոցը սնտուկներուն չորս դին պատելով՝ առանց ամաններուն դպչելու՝ պէտք եղածին չափ կ'եփէ : Փռան չորս դին եղած գործաւորները կ'իմանան ամաններուն եփիլն ու կրակը կը մարեն . անոր համար առջինին պէս մէջը օրինակ դրած կ'ըլլան նոյն յախճապակին նիւթէն՝ վրան կտոր մը նոյն գոյներէն քսուած :

Այ գոյնը տաքութեան համեմատ՝ աւելի կամ պակաս պինդ ու թոյլ կ'ըլլայ . ինչպէս բուն կարմիրը որ աղիւսի գոյն ունի, երբոր արծաթ հալեցընելու տաքութեան աստիճանը հասնի՝ մուգ մանուշակի գոյն կ'առնու, և այլն : Անոր համար ժամանակը գալուն պէս՝ երբոր կը տեսնեն որ մէկ գոյն մը իրենց ուզած աստիճանին հասեր է, կրակը կը դադրեցընեն : Իսոյց ամանները դուրս հանելէն ետև երբոր ներկարարը տեսնէ որ մէկ քանի ամաններուն վրայի ներկը կամ ոսկին թափեր է, որչափ անգամ որ կը նորոգէ ան տեղուանքը՝ պէտք է միշտ վերջէն փուռը դնէ ու եփէ առջինին պէս :

Ահա աս կերպով կը շինուին ան յախճապակները՝ որոնց վրայ մարդս կը զմայլի երբոր տեսնէ Ալեքի թագաւորական ձեռագործաց սրահին մէջի տեսակ տեսակ ձևերով, մեծութեամբ, ու գոյնզգոյն զարդերով շինածները . անոնց շատին վրայ նաև երևելի նկարիչներու պատկերները օրինակած են գեղեցիկ կերպով :

Հ . Ե . Կ



ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ



Թխաբար 1 :

ԱՌԵԼՈՒ համար գործածուող հանքային նիւթերուն մէկն ալ ածխաքար ըսուածն է, որ ատեն մը ընդհանուր անունով մը ամէն աս տեսակ նիւթերը հանքային ածուխ կի՞ գետնի ածուխ կ'ըսուէին : Թխաքարը սև գունով նիւթ մըն է, ու գետնի ածուխին շատ կը նմանի, բայց մասնաւոր նշաններով անկէ կը տարբերի : Թխաքարին բաղադրութեանը մէջ կուպր ամենևին չկայ . թէ որ ձեռք

առնելու ըլլաս՝ կամ մատով վրան
 դպչելու ըլլաս՝ Թողուցած նշանը սաս-
 տիկ կը տոգորուի ձեռքիդ վրայ :
 Մը նիւթը կարծր , չոր ու սովորաբար
 փխրուն է . խիստ դժուարաւ կը բռն-
 կի , վառելու համար ալ շատ օդ կ'ու-
 ղէ . բայց մէյմը բռնկելէն ետքը՝ ա-
 ուանց ծուխ ու հոտ հանելու կը վա-
 ուի . բոցը ցած կ'ելլէ ու ճերմակա-
 գոյն է . բայց Թէ որ քիմիական եղէ-
 գով մը փչելու ըլլաս՝ բոցն ալ խիստ
 կը բարձրանայ , ու շատ փայլուն կ'ըլ-
 լայ : Թէ որ քիչ մը ածխաքար վրայէ
 վրայ դիզես՝ ամենեւին չվառիր , մա-
 նաւանդ երբոր սաստիկ չփրչես . ուս-
 տի աղէկ վառելու համար՝ պէտք է
 բաւական առատութեամբ նոյն նիւ-
 թէն պզտիկ բլրակի մը ձևով դիզել
 ու բռնկցընել : Մծխաքարին Թու-
 ղուցած դիրտը կամ մոխիրը շատ է .
 և Թէ որ վառելու համար դիզած
 կտորները խիստ պզտիկ ըլլան՝ մէջ-
 տեղը առանց վառելու սե կը մնայ :
 Արակարանի մէջ վառելու ատեն ալ
 Թէ որ մէկ կտոր մը դուրս հանես ,
 հանած չհանած մէկէն կը մարի , ու
 վրան մոխիր կը պատէ . և առանց կո-
 տրրտելու կամ մոխիրը վրայէն մաք-
 րելու անկարելի է նորէն բռնկցը-
 նելն ու բանի բերելը : Մծխաքարին
 կտորները վառելու ատեն ամենեւին
 իրարու հետ չեն կպչիր , և երկայն
 ատեն վառելով՝ դժուար կը հատնին :
 Տաքութեան աստիճանը խիստ սաս-
 տիկ է . միայն Թէ քանի մը տեսակ
 ածխաքարեր կան՝ որոնց խոշոր կտոր-
 ները վառելու ատեն կը փչրին ու ա-
 լազ կը դառնան :

Մծխաքարը լուծելով կը տեսնենք
 որ բազադրութեանը մէջ ոչ կուպր
 կայ , ոչ ջրածին կազ , և ոչ ալ ամմո-
 նիաք . հապա առատ ածուխով բազ-
 կայած է , և ածխաքարին վառելի
 կամ Թէ ըսենք այրելի նիւթը՝ միայն
 աս է . ածուխին հետ քիչ մըն ալ գայ-
 լախազի , պաղլեզի ու երկրթի կտոր-
 ներ խառնուած են : Մէկ խորանարդ
 ոտնաչափ ածխաքարը 120^{էն} ինչուան

126 լիպրէ ծանրութիւն կ'ունենայ :
 Առն ածխաքարը , որ չոր ածուխէն
 աղէկ պէտք է որոշել , կ'ըսեն Թէ եր-
 բեմն գետնի ածուխի հետ մէկտեղ կը
 գտնուի , երբեմն ալ փայտաքարի՝
 հետ . բայց որովհետև աս օտար նիւ-
 թոց հետ խառնուած ածխաքարը
 քիչ բան է , անկէց մեծ օգուտ մը
 չելլեր ածխաքար գործածողներուն ,
 հապա պէտք է բուն ածխաքարի
 հանք ու Թերթեր գտնել :

Մենէն առատ ածխաքարը անցո-
 ղական՝ ըսուած հողերուն մէջ կը
 գտնուի , որ Մլպեան լեռանց գօտի-
 ներուն մէջ խիստ շատ կան : Մլպեան
 լեռներուն ածխաքարը շատ անգամ
 լեռներու ծայրերը և կամ բարձր լեռ-
 ներուն դարվար կողերուն վրայ կը
 գտնուի . աս լեռներուն ածխաքա-
 րի զանգուածները անկանոն ձև մը
 ունին , և ասոնց հետ խառն կը գըտ-
 նուին զանազան նիւթեր . ւն , մոխրա-
 գոյն կաւիճ , որ երբոր կրակին վրայ
 դնելու ըլլաս՝ կը ճերմրկնայ . ք , սև
 հերձաքարի Թերթեր , որոնց վրայի
 փոս ու ցցուած տեղուանքը ողորկ ու
 փայլուն են , և մէջը ճերմակ բուար-
 ցի երակներ կան . դ , ուրիշ տեսակ
 սև հերձաքար մըն ալ՝ որուն մէջ
 խիստ քիչ միքայի մասունք կան , և ի-
 րեն Թերթերը Թանձր ու փայլուն
 են , վրանին ալ շատ անգամ ամբողջ
 բոյսեր և կամ բուսոց մնացորդներ
 տպաւորուած կ'ըլլան : Մծխաքարի
 մէջ գտնուող հերձաքարերը , և մա-
 նաւանդ գաճերը , կանոնաւոր դիւք
 մը չունին , հապա ինչպէս որ եկեր է՝
 ածխաքարերուն հետ խառնուեր են ,
 ու կտոր կտոր զանգուածներով կ'ըլ-
 լան :

Մծխաքարին Թանձրութիւնը տեղ
 տեղ 15^{էն} ինչուան 24 ոտք կ'ըլլայ .
 բայց տեղ տեղ ալ յանկարծ սաստիկ
 կը քիչնայ , ու քանի մը բթաչափէն
 աւելի Թանձրութիւն չունենար :

Մծխաքարերուն հետ ելած ածու-

1 գղ . Lignite.
 2 գղ . Terraines de transition.

խին շատութենէն, ու վրան տպաւորուած բուսոց պատկերներէն յայտնի է թէ ածխաքարերն ալ բուսական նիւթերէ առաջ եկած են, թէպէտ մէջերնին ամենեւին փայտի մասունք որոշ չերենար. և որովհետեւ գայլախաղոտ խաւերու հետ խառնուած ու անոնց հետ շաղուած են, ան պատճառաւ քարի պէս կարծր են:

Բ. Թխաքարը միշտ անկիզելի նիւթ մը կարծուելուն համար, մարդիկ ոչ երբէք մասնաւոր ջանք կ'ընէին գետնէն հանելու. բայց հիմա բաւական գործածական նիւթ է. և Պրարտ անունով գաղղիացին այլևայլ փորձերով ցոյց թէ աս նիւթն ալ վառելու կուգայ, ու պէտք չէ բոլորովին երեսէ ձգել. իրեն ըրած փորձերէն մէկ քանին դնենք հոս:

Ա. Արաքարը ածխաքարին հետ կոնոնաձև փռան մէջ եփեր է. փռան մէջը այլևայլ բարձրութեամբ ծակեր բացեր է, և ուրիշ հնարքով ալ օդ բանեցուցեր է մէջը. անանկ որ փուռը աղէկ վառեր ու տաքցեր է. եփած կրաքարը դուրս քաշեր է, ու տեսեր է որ ալ քարի պնտութիւն չէ մնացած վրան, և ինչուան մէկ խորանարդ կրաքարի կտորուանք բոլորովին կիր դարձեր են:

Բ. Թխաքարին փոշին՝ որ քիչ մը պարարտ հողի հետ կը քարանայ, ու կոշտ կոշտ կը դառնայ, շատ անգամ կիրը եփելու գործածեր է՝ երբոր փուռը առաջուց աղէկ տաքցուցած է եղեր:

Գ. Բնական տեսակ երկրթեղէն գործիքներ, ինչպէս մկրատներ, վառարանի թիակներ, բրիչ, ուրագ շիներ է ածխաքարի կրակովը, ամենեւին առանց փայտ կամ հանքային ածուխ գործածելու. միայն աս իրաւ է որ օդ փչելու գործիքը իրեք փուք ունի եղեր, որ սովորաբար ուրիշ փուռերունը մէկ է:

Դ. Ինչպէս որ յայտնի է՝ դարձնոցներու մէջ գամ շինելու համար երկաթը ստէպ կրակէն կը հանեն ու ետքը նորէն ներս կը խոթեն. և ահա աս գործողութեան շատ յարմար է ածխաքար գործածելը. և Պրարտ կ'ըսէ թէ երկու տարի աս բանիս փորձն ըրեր եմ ու միշտ աղէկ յաջողեր է:

Ե. յայտնի է որ ածխաքարը վառելու համար խիստ շատ օդ պէտք է, բայց մէյմը վառելէն ետքը սաստիկ տաքութիւն կուտայ, անանկ որ քանի մը ըրպէի մէջ մէկ բթաչափ հաստութեամբ երկրթէ գաւազանը կը կարմրնայ. նաև խիստ կարծր ու շատ տեսակ նիւթերով զանգուած մետաղները դիւրաւ կը լուծուին. թէպէտև ածխաքարը կրնայ շատ օգտակար վառելի նիւթերէն մէկը սեպուիլ, բայց մէկ քանի տեսակ ածխաքարեր կան որ անպիտան յատկութիւն մը ունին. այսինքն ինչպէս որ վերն ըսինք՝ վառելու ժամանակ կիր կը դառնան, ու գէշն ան է որ փոշի պէս մանրուելով՝ փռան մէջի մետաղներուն վրայ կը նստին, ու անոնց հետ կը խառնուին, որով խիստ դժուարաւ կը հալին ան մետաղները: Եւ բանիս առաջը առնելու համար՝ առաջուց աղէկ քննելու է ածխաքարին տեսակները, ու գէշը աղէկին հետ ամենեւին խառնելու չէ:

Հ. Բ. Ե

Օրագրիս 1 թուոյն 15 երեսը Երասի -- Կ-- անուններուն տեղը՝ կարգալու է Պէնփէփ -- Գի-- կամ Կ--: